

հոգեար տիրոջը, զոր հոգայն պէս կը սիրէր, բայց սիրու չ'ըրաւ դուրս ել-
լելու՝ սարսափած ըլլալով ընդ մէջ քահանային և երեցիոխանին պատուհած
դէպքերէն ձ.

Այս միջոցին Մալնաշին ծաղրածու դէմքով և վրէժինդիր օդով առ ժո-
ղովրդապետն գարձած՝ ըստա.

— Անպատի ըրիր զիս և խայտառակեցիր հնասանեօքս հանգերձ, ահա-
սափկ դու, ալ անզատի եղար և խայտառակեցար :

Մինչեւ ի խոր սրտին միրառուեցաւ ժողովրդապետն այս նախատական
խօսքերը լսելով. արիւնը զլովիր զարկաւ. մոռցաւ իւր հեղութիւնը, իւր ազ-
նուական ու վեհանձն զգացմանընքները, աեմնելով քահանայական աստիճանը
և պատիւր ոտքի առկ առնուած՝ արդարութեան համար : Այրած սրտով կառ-
քէն վար իշնալով՝ բռու մը հոզ առաւ գետնէն՝ ու երեցիոխանին զիմաց
նեսելով, զայրագին ձայնով պատուսանից իրեն .

— Ոչնչան բոլոր քու ընտանիքդ այս հոգայն պէս, զոր աշքիդ զիմաց
միւ տեսնես. անիծեալ ըլլաս մինչեւ ի դուռն զերեզմանիդ :

Այս ըսելով կառ նստաւ մօրը քով, և տուանց ուշանալու ճամբայ ելան :

Շարայարելի

ԳԻՏԱԿԱՆ Բ

ԹՈՉՆՈՑ ԵՐԳԵՐԸ : — Խտացի մը (կարուոս Փարանի) հետևեալ
տեսուքինն կ'ընէ բոլոց երգանայնուրեամ վրայ :

Բլամենքափ կը համարի թէ թռչնոց երգը՝ նայն խակ ազատ վիճակի մէջ
եղած, վարժութեամբ և նմանողութեամբ ըլլայ, և գոցէ այս ենթադրու-
թեամբ է որ իրենց և այլ կենդանեաց ձայնի մէջ քանի մի օրէնքներ զուայ,
որ ըստ իս ցարդ զիտուած չեն, սակայն և այնպէս մտադրութեան արժանի
են : — Մեր օդային հիրոց լեզուին զանազանութիւնը կը թուի թէ յարմա-
րուած է ըստ ընդարձակութեան և գեղեցկութեան կամ տգեզութեան տեղույն՝
որ կ'ապրին, և ժաման՝ յորում կ'երկին : — Ճեղոյ և ժամանակի հանգա-
մանաց վրայ՝ այս ևս աւելցընենք, որ թուանք՝ կարծես ունակարար կ'ըն-
կերակցին իրենց երգով այն էակաց ձայներուն՝ որոնց հետ կը կենակցին և
որով կը կերակրին, ըստ իրացանչիւրին բնաւորութեան :

Արծուոյ սուր, ցամաք, խիստ կոնչիւնը՝ ճիշդ համաձայն է այն բարձրաբերձ

լերանց սեպացեալ գագաթանց՝ ուր կը զնէ իւր բոյնը՝ և ռակից լսեցնել կու տայ իւր ձայնը, մինչդեռ Ծիծուան յարասոն ճունիւնն՝ կը նմանի մարդկանց անվերջանալի շաշփաղփանաց՝ որոց բնակակից է, այլ և օդյ փոփխականուա թեան յոր կը սուրայ, և բիւրաւոր ճանճերու բզզանաց՝ որովք կը կերակիր ։ Բազէն իւր ձայնի մէջ ունի տեսակ մը զողղոջում և վայրենութիւն, նման այն վայրենի ժայռից և գահալէժ բարձանց՝ որոց վրայ իշխանաբար կը սրանայ յանդուդն պտոյտելով : — Բնութեան տիսուր լուսեթեանն մէջ՝ ձիւնաս պաս լերան գագաթան վրայ Զիւնական Սալամբը * կը նմանի բնութեան՝ իւր լուսեթեամբը, նոյնպէս նաև լրին վայրաց միւս թռչաները, ինչպէս լեռարանց Արլորն (Galletto di montagna), և Սալամբի այլ տեսակիր ։ Կաքան, կտրմբատուտն (Codirossone), Մրոտուկն (Spazzacamino ?), Սպիտակագլանչն (Culbianco ?), որք իրենց կեանքը կ'անցընեն որձաքարանց շեղակոյս տերու մէջ, զորս ժամանակն զիշած է բարձր լերանց զառ ի վայրից վրայ, ունին սուր եղանակ մը՝ կրծատ և բնդիմա, նման՝ խորտակեալ ժայռից և իրենց յաճախեալ ստէպ իրարու զարնուելուն . Փողոշարիկի (Trombettiere), ինչպէս նաև Խոլանաւու (Sordone ?) երզը՝ անսուլոր խազերու համախմբութիւն մ'է, ընդհատեալ մերթ ընդ մերթ սուր սուր ճիշոլ և գրգանքով, որով լաւ կը համաձայնի իրեն սիրած անքեր, քարուոր և արևակէզ վայրաց ։ Ճնճղուկն մենասէր (Passero solitario), որ կը զրօնու կարկաջող հեղեղատից ցցուած գահամիմաց վրայ, ունի իւր երզին մէջ այն կարկաջիւնը՝ զոր կ'արձակեն ջուրք բախելով ընդդիմ ժայռից . խակ ընտանի ճնճղուկն՝ որ իւր բոյնը կը զնէ և կ'ապրի տանեաց կզմինտրներու տակ, իւր ձայնը ճիշու նմանեացոցած է կարկտի և անձրէի տանեաց վրայ սեղացած միջոց հանած ձայռնին : Տրողիլու (Reattino), որ կը սիրէ փայտակյատեր և մացաւախիս վայրեր, իւր սովորեալ երզին մէջ ունի նմանութիւն փայտից ճարճատման՝ որ կը տարածուին և կը կծկին օդոյ խոնաւականութեան լիճակին համեմատ, նոյնպէս նաև հողմոց շնչան՝ որ կ'անցնի մացառաց և թփոց միջով : Զայշամի ձայնն զօրաւոր է, խիստ և կերպեր, համաձայն չոր աւազուաից, ուր կը բնակի, ինչպէս որ կոլիբրի (Colibri) մնչիւնն նման է իւր քաղցրութեամբ արևագարձ գաւառաց ծաղկանց՝ և բզզանաց բիւրակզի միջաւաց :

Գիշերն մերթ զուարթ և մերթ տիսուր և միջին, ունի Սոխակն և Բու, մին՝ ինչպէս կ'ըսէն բանասեղձք, կ'երգէ զգերիւո, պուրակն, զրուսին, զրնատանիս և զմտերմութիւն . և միւսն՝ զնողմն, հինաւուղց անտառներ, բազմամեաց ծառոց կոճղեր, անձկութիւն, խաւար և մահ . . .

* Թուչուն մ'է կաքաւու ցեղէն, երկայն և զօրաւոր կտցաւ, միանգամայն բարձրասրաւն . կը զտուի յլլիմա, յլլիմբիկ և յԵւրոպա. Երկայն՝ 30-8 հրդմար. միւս խիստ յարգի է և պատուական . (Տես Բառգիրք Արուեստից և Գիտութեանց և Գեղեցիկ գպրութեանց) . և Մանուէլ Վլէ Քաղցւաւոյ. Տպ. Ի Վէնետիկ Ս. Պազար) :

Գիշակերաց երգն՝ աւելի չոր և բեկեղէ է, իսկ միջառակերացն աւելի սուր, աւելի երկար, և խաղերն՝ նուազ բեկեղէ ։ Ճայինք՝ կերկերաձայն են և միտնուազ, նուան իրենց ցուրտ և ճամփային բնակալայրի:

Վերջապէս ամենայն թռչունց որ արեամբ կը սնանին, գիշակերաց նման ճիշ՝ կ'արձակեն, այսինքն՝ նման իրենց զիշառած որսերուն տկար և խզուկ աղալանքներու: Գայլն կը մայէ, կը բառաջէ կամ կը հաջէ իւր պէտքին համեմատ: Ազուկն կը զրգայ հաւուց նման և կամ կը ճշայ. Վազրն՝ կը բառաջէ ցլու նման, և ծովային Արջն այնպիսի կերպով մը կ'ունայ, որ կը նմանի՛ իւր ստէպ լսած ալեաց շտուշմանց. ասնց նման Արին այլ՝ ճագորի պէս կը վըմըրայ. Ցինն՝ կաշաղակի կամ կառուկի ձագի նման կը մշաէ. Բաշոտն՝ (Smeriglio), կը նմանցընէ իւր ճայնը թխսամօր հաւու, որ վախ-նարով ձագերը իւր պաշտպանողական թեւոց տակ կը կոչէ:

Կենդանեաց ձայնին այս օրէնքո՞ ի յարընչութեան իւրաքանչիւրին բը-նակած տեղեաց և կերավոյն հետ, խիստ զարմանալի է, և կը ծածկէ յինքեան գաղտնիք մը. զի երբ մարզկային կենաց մէջ այլ հրէշ մը հանդի-պի, զիշակերաց բնութեան կը հետեւի, և յիրափ եղած են բոնառք, ինչ-պէս կ'ըսէ Շուտասրբիան, որք իրենց կերպարանքին և ձայնին մէջ՝ կը պահէին մարդկալմեան նշաններ, և արտաքուստ կը ձևացընէին այն թշուառաց լիրուն զորս ներքուստ կը փափագէին փողոսել. բայց իննամակալ բնութիւնն չուզեց որ անոնք զմեղ ի սպառ խարեն. զի եթէ այս կատաղի մարզիկ սա-կու ինչ իննամբով քննուին, իսկոյն կը ճանցուի՛ իրենց կեղծ հեղութեան ներքեւ պատրուակեալ նենցութիւն մի, ու ճշմարտութիւնը մի որ հազար անդամ աւելի զարհուրելի է՝ քան իրենց կատաղութիւնը, երբ զայս համարձակ յայսնեն:

Միով բանին՝ նմանութեան օրէնքո՞ կայ յամենայնի, սկսեալ ի միջառաց որք բզզեն՝ նման զիրենք շրջապասոց խոսի նուրբ ստեղանց, յորս կը զեռան, մինչեւ ի մարդն՝ որ թէ և բանաւոր, այլ զժուարաւ կրբնայ ազատ մասլ բնութեան այս գերազոյն օրէնքէս. որ իւր մեծագոյն ազգեցութիւնը կը ցուցընէ թռչնոց դասաւն վրայ, որ գերազանց երկողք և շաղակառք են:



ԶԵՐՄՈՒԹԵԱՆ ԱՆԹԱՓԱՆՅ ԱՊԱԿԻ: — Խիստ գեղեցիկ բան է վայելել արեւուն կամ որ և է վառարանի մը լցուր, առանց միւնոյն ժամանակ անոր շերմութիւնն զգալու. և այս շերմութեան բաժանումն ի լուսոյ, իրաւամբ շատ պիտի յարգեն այն ամենայն գործաւորք՝ որ մետաղանալութեան և այլ նոյնպիսի դժոխային գործատանց մէջ կ'աշխատին: Արդ այս զիւսու արգէն գրնուած կը համարուի և միանքամայն յաջողած՝ մասնաւոր պատրաստութեամբ շինուած ապակիսվ մը, որ մինչ թոյլ կու տայ լուսոյ՝ իւր համայն պայծառութեամբ ճառագայթել, միւս կողմանէ շերմութեան անցքն ու ծառ-

ւալումն կը խափանէ : Այս այս ապակիս պիտի բաղկանայ վախճառն մասն աւագէ , քսանուհինց՝ քաղլինէ (kaolin) և երեսունաշորս նտարոնէ , որոյ եօթնէն ց'եօթնուկէս հազարորդամետր թանձրովթեամբ թիթեղ մը , կազի ծորանի արձակած ջերմովթեան հազիւ հարիւրին տասնեւմէկ կամ երկու մասը կը թողու որ անցնի :

* *

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՇՈԳԵԿԱՌՈՒԹԻՄԲ : — Գերմանիոյ կայսեր հրամանաւ շինուելի շոգեկառախումբը մօսերս լերշացա՝ որոյ շինուա թինը երեք տարի անեց և արժեց 3,750,000 ֆրանկ : Կազմուած է 42 կառքերէ՝ որ իրերաց հետ հաղորդակցութիւն ունին . Գրոց դահլին որմերն զարգարուած են Գոբենեան գորգերով (Gobelins), որու կայսրն բերել տուաւ կարլոստէնբուրգի պալատէն . ճաշի զահլինը պատշաճուած է կաղնիէ գեղեցիկ կահաւոց , կայ նաեւ սրանակ մը նոյնակէս գորգերով պինած ու կահաւորուած , և ուրիշ մի ես՝ որ զարդարուած է կնեայ արձաններով և ամ բողջ դիմախամբերով (Girarro), որ կը ներկայացնէ ընդունելութեան դահլին . զարձեալ կայ փառաւոր ծխասենեակ մը , երեք ննջարան , նախասենեակ մի փոքր արդու զարդի համար . ասոնց հետ նաեւ մեծ խոհանոց մը . և այլն :

* *

ՊՏՂԱՑ ՈՒ ՏԵՐԵՒՈՅ ԳՈՒԽԱՀՈՐԻՉ ՆԻՒԹԻՆ . — Առնունք օրինակի համար խազզող և քննենց թէ ի՞նչ է այն նիւթն որ զայն կը գուա նաւորէ և անոր տերեւին զոյնը կը փոխէ յաշնան : Պր . Գաւաթէր՝ կ'ըսէ՝ թէ այն գունաւորիչ հիւթն տերեւին մէջ է և անտի խաղողահատին մնին մէջ կ'անցնի . և զայս ապացուցանելու համար՝ զիթէրէ հասուն ողկուզերով լի որթ մ'ընարեց և անոր զրայէն ամէն տերեւ կտրեց . այնու խաղողն կանաչ մնաց : Իսկ երբ՝ փոխանակ տերեւազիրկ ընելու՝ տերեւոց ջրալից կոթուները կը ճնշէր , որով և գունաւորիչ հիւթոյն շրջանը կը խափանէր , այն ժամանակ՝ ամբողջ նիւթն տերեւոց մէջ մնալով , ասոնք ծիրանեփոյն կը լինէին , իսկ խաղողն՝ նոյնակէս կանաչ ու հասուն :

Այսօք նոյն նիւթն է՝ որ թէ տերեւը և թէ պտուզն կը գունաւորէ . — արօւեստօրէն , այսինքն է , կոթունք սեղմելով՝ կարմրացած տերեւոց միջէն համուած հիւթոյն ապրաբանական լուծումն , կը ցուցընէ՝ թէ նա գունաւորիչ թեակաղեցին (tannin) կամ անոր բիւրեղացեալ աղերու բաղակցութիւն մ'է . որք՝ եթէ պտուզը գունաւորող նիւթերու հետ նոյն ալ չեն , սակայն իրենց բաղակցութեամբ շատ մերձաւոր են անոնց : Այս գունազան փորձերով կը հետեւցնէ պր . Գաւաթէր՝ թէ խաղողոյ գունաւորիչ նիւթն՝ տերեւոցէ յառաջ կու գայ , բայց պտղոյն մաշկին մէջ կը փոփոխի և կը խատարելազործուի :

իսկ որթոյ տերեւաց յաշնան առած ծիրանի գյոնն՝ ըստ պր. Գաւատիերի՝ կախումն չ'ո՞նի Բուսականացի (chlorophylle) գոյացովթիւն կրած փոփոխութենէ մի, այլ վերոյիշեալ կարմիր գունաւորիչ նիւթոյն ներս մնալէն ու միշտ ջամութենէն և այսպէս - տարրաբանական լուծմամբ կը տեսնեմք՝ որ բուսականաշն բրակածնեալ է, իսկ կարմիր նիւթն՝ ոչ նոյնպէս, դարձեալ, եթէ տերեւցմէ հանուած ու չէզրացուած բուսականաշը՝ լուսոյ ազդեցութեան ընթագրենք, յայտնի կը տեսնամի՝ զի թէպէտ գանոյ փափոխութիւն կը կրէ՝ այլ կանաչէն ի կապոյ և ի միջանկեալ զոյներն, և ոչ երբէք ի կարմիր աշնանային, և զի բնաւ շնծայէր այն գեղեցիկ միախառնութիւնը մըթնաւզոյն, գեղնորպակ և կարմիրերիեան գունոց, և ոչ անոնց այն փայլումը, որով աշնան վերջերն ճառագայթող արեւն՝ սովոր է ցոլացընել որթոյ տերեւքը:

* *

ՍՈՒԴԻՒ ՀԱՆՔԻ Ի ՌՈՒԽԱՍՏԱՆԻ. — Գրեթէ տասն ամ է, յորմէն հետէ սիսուած է Ռուսիոյ մէջ գտնուած սնդիկի հանքերու շահագործութիւնն, որոց վրայ մօտերս՝ ըստ վկայելոյ Պետրոսուրզի թերթին՝ յաւելան նաեւ ուրիշ նորագիւտ հանք այլ, կատերինուալ զաւասի թախմաւ վիճակի մէջ, և թէ այն ժամանակէն ի վեր խնամքով կատարուած աշխատութեանց տարեկան բերքն հասած է 20,000 պուդ սնդիկի, որ է բան 330,000 քիլոգրամ, որ անտարակոյ պիտի առաւելու երբ նոր հանքերն այլ բանեցընեն։ Բայց ուրովինետեւ զուս և խկոյն աշխատուելի հանք սակաւ կը զտնուին, ինչպէս յայնի է, անոր համար Ռուսօք կը փափաքին որ մեծ մասը արտասահման տարսի, և արգէն իսկ ներկայիս 14,000 պուդ կ'ուզարկուի։ Այսպիսի հանգամանաց մէջ մաքսի պաշտօնեայն որոշեց սնդիկի վրայ այլ մաքս զնել ինչպէս արդէն ամէն մետաղի վրայ կայ։ Ըստ այսմ մի պուդ սնդիկի վրայ 55 կոպէկ մաքս կ'առնամի, որ չափազանց չէ, որովհետեւ՝ հանդերձ այսու որ սնդիկի վաճառականութեան մէջ այլ մրցանք մտած է, սակայն բնաւ զինը 32 բուրդիէն առելի ընկած չէ մի պուզի համար, միշտ միջին զինն՝ 40 բուրդի համարուած է։

* *

ՇՈՒԳԵՆԱԼԻ-ՏՐԱՄՎԱՂԹ. — Յետ արուեստի գարգացումն ընծայելու մեջ ենթածովային շոգենաւեր, ահա յաջողեցաւ ցոյց ընել մեզ նաեւ ցամաքային նաւեր, կամ նաւակառեր զորս եւրոպացիք։ Bateaux-tramways անուանեցին, շոգենաւ-տրամվայ, կամ շոգենաւակառք՝ ըստ մեզ։

Սյոյն նոր աւ նարսար զիւտիս տեղն Շուեզաց աշխարհն է։ ուր անցեալ տարի Լիւնգեգրենի զործառան մէջ կառուցին բոլորումին նոր զրութեամբ շոգենաւ մի, որ պիտի իրար կապէր տէրութեան մէջ եղած երկու նեղ գետնով բաժնուած լներ։

Սա՝ վտթուուն անձն կ'առնու իւր մէջ . տասն ձիռ ուժ ունի , և պյնապէս շինուած ու գործիներով պատշաճուած է , որ յետ սովորական ջրային անցքն ընելու , երբ անջրպետ ցամաքը կը հասնի , շոգեկառքի նման երկաթէ ուղղոյն վրայ եղնելով ու անուադարձ զորելով՝ նոյն իւր ունեցած գործեաց ուժով՝ դարձեալ կարապի պէս երկրորդ լճի մէջ կ'իջնէ նաւարար սուրալով ջրոց վրայ :

ՑԱՆԿ

Կենսագիր և նկարագիր Եզնկայ վարդապետի կողբացւոյ	353
Պատմութիւն Ս . Սեղբեսարոսի , համեմատութեամբ հա-	
յերէն և յունարէն թարգմանութեանց	358
Ծիսն եւ հատիկ (առակ)	368
Հայկական բուսաբառութիւն	369
Հայք եւ դիցաբանութիւն Հայոց	375
Հայ լեզուի ուսումն յԵւրոպա	379
Ծագումն քրիստոնէական ճարտարապետութեան .	383
Դրանսիլուանիոյ Եղիսաբեթուպոլիս քաղքին ազգային	
այլ և այլ օրէնքներն ու կանոնագրութիւններն	387
Անէծք	394
ԳԻՏԱԿԱՆՔ	
Թռչնոց երգերը	395
Ջերմութեան անթափանցող ապակի	397
Գերմանիոյ կայսերական շոգեկառախումբ .	398
Պալոց ու տերևոց գունաւորիշ նիւթն	398
Մնդկի համք ի ժիուսաստան .	399
Շոգենաւ-Ճրամկայ	399